

չէնքն անգամ ունեցած է, այրած 1907 Մայիս 11-ին:

ՊՈՒՔՐԷՆԻ ՄԷՁ

Պուքրէչի դպրոցն ալ անցեալ դարու ըսկիզբներէն կուգայ մեզի: 1800-ի ատենները Պուքրէչի հայերը արդէն ունէին իրենց դըպրոցը, որ յետոյ Մինասեան տիտղոսը պիտի սունէր չէնքը հիմնող Վարդերես ամիրա Միսաքեանի անունով:

Առաջին դաստիարակը զոր հնար եղաւ ինձ գտնել Գասպար անուն Սասնեղցի ուսուցիչ մըն է, որ ինքզինքը «մանկավարժ» կ'անուանէ եւ որ իր մասին քանի մը ծանօթութիւն կուտայ 1820 Փետրվար 15-ին Պուքրէչէն գըրուած նամակի մը մէջ: Հոն կ'ըսէ թէ իր նախնական կրթութիւնը առած է Պրուսա՝ տեղւոյն Առաջնորդին մօտ, եւ յետոյ՝

«Եւ երեք ամք են՝ ի հասարակաց գերահամբաւ դպրոցն Միջագիւղի առնթեր փարթամաշնորհ եւ գերիմաստ Գրիգոր վարժապետի Փէշտամալճեան պարապեցայ յարհեստ գըրականութեան եւ ի գիտութիւնս չափաւոր վարժութեամբ, եւ այժմ որ գերասանակ անձնիշխան կամաց մերոց ի ձեռին ունի, եւ յաջողէ ի մեզ զկամենն եւ զարնել, յաջողեաց մեզ փորձ փորձել զպանախտութիւն, եւ դալ ի Պուքրէչ ի դաստիարակութիւն գեռարոյս մանկանց հայկազուն բնակչաց տեղւոյս»:

Գասպար վարժապետն է մեզի ծանօթ առաջին դաստիարակը Պուքրէչի մէջ:

Կրթական դործը, Պուքրէչի մէջ, ունեցած է իր հովանաւորները առաջին օրէն: Բացի Վարդերես ամիրա Միսաքեանէն՝ որ Պուքրէչը օժտած է դպրոցի մը չէնքով, ուրիշ հայ կարկառուն դէմքեր ալ դպրոցը առած են իրենց խնամքին տակ: Ասոնցմէ կը յիշուին Մանուկ պէյ Միրզայեանը եւ Աղա Սաշիկ անուն մեծ պաշտօնատար մը՝ որոնք յաճախ նպաստած են դպրոցին:

Բայց դժուար թէ հայ ժողովուրդի կեանքին մէջ որեւէ դործ կենդանի մնար՝ եթէ չըլլար Անձանօթ Բարերարը, այն որ համեստ ժողովուրդն է, յաճախ ինքը չբաւոր՝ բայց որ գիտէ իր լուսման բերել զրկելով բերնին պատար: Զեռքս անցաւ յիշատակարան մը՝ որ կը պատմէ թէ ինչպէս ծնունդ առաւ ու դար-

դացաւ «Մէր Անուն Յիսուսի» ընկերութիւնը: 1833-ին «եղբայր Մկրտիչ Սաշիկով» ի դըրուամով Պուքրէչի մէջ կազմուած՝ այս ընկերութիւնը նպատակ ունէր եկեղեցին ու դպրոցը օժտել հասութարեր կալուածներով: Տասնոցներով կը սկսի, ու տասնոցներով ալ գլուխ կը հանէ իր նպատակը: 1864-ին արդէն ազդին կը փոխանցէ իր ապահոված չէնքերը: Ընկերութեան 27 բաժնետէրերը ուրիշ յաւակնութիւն չունին բայց եթէ իրենց յիշատակին հոգս'ց մը տարուէ տարի, հոգեզալուստին: Բայց ո՞վ կը խորհի հիմա, զոնէ տարին անգամ մը, միտք բերել անոնց անունը: Իրա՛ւ ապերախտ է դարը:

Բայց երբեմն անանկ չէր: Մարդիկ կ'օրհնէին իրենց բարերարները: Զանոնք կը յիշէին նոյնիակ իրենց ամէն օրուան աղօթքին մէջ: Մանուկներուն անգամ կ'ուսուցանէին անոնց անունը: Կը փորձուիմ նոյնութեամբ տալ հոս՝ պատճէնը մաղթանքի մը, զոր 1840-ական թըրականներուն, պարտաւոր էին արտասանել ամէն առտու հայ դպրոցին տղաքը:—

«Մաղթանք երգելի ի դպրոցն Պուքրէչ քաղաքիս»:

«Սնդրեցուք մաքուր մտօք եւ աներկմիտ յուսով, յաստուածային անբաւ ողորմութենէ եւ մաղթանք սրբոյ եկեղեցւոյ եւ մեր ժողովոյս, ընդհանուր աշխարհիս խաղաղութիւն եւ անդորրութիւն:

«Քրիստոսամէջ սրբոյ Մայր Աթոռոյն մերոյ եւ ամենայն վանօրէիցն եւ սրբոց եկեղեցեաց հաստատութիւն եւ վայելչութիւն:

«Եւ նորին սրբոյ էջմիածնի աստուածակոչ հայրապետին եւ մեծ դահակալին Թաղէոսի առաքելոյ, զիջումն հոգւոյն սրբոյ առատածաւալ շնորհօք հաստատել մշտնջենաւոր հովուութեան համօրէն ազգիս եւ ի պարձանս ամենայն Հայաստանեայց:

«Եւ Կոստանդնուպոլսոյ տիեզերական պատրիարքին աստուածեղէն իմաստութեամբ եւ անդորր կենօք յաթոն իւր հաստատութեան:

«Եւ մերոյս վիճակի առաջնորդի, սրբոյ եկեղեցւոյս եւ դպրատանս պայծառութեան մեծաեղ ջանացողի Տեառն Գէորգայ Արհիեպիսկոպոսի արծարծել զեռանդն ազգասիրութեան